«ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-511-12.03.2020-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է օրենքի 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն որի վետերանների ամենամյա պատվովճարի չափը սահմանվում է 200 000 դրամ:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հարկ է համարում նշել, որ օրենքում առկա են պատվովճարի սահմանման իրավական կարգավորումները, մասնավորապես՝ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված է, որ «Վետերանն ստանում է ամենամյա պատվովճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով», իսկ 8-րդ հոդվածի համաձայն «Վետերանների ամենամյա պատվովճարի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Այսինքն՝ օրենսդիրը, Հայրենական մեծ պատերազմի վետերանների ամենամյա պատվովճարի չափը սահմանելու իրավասությունը վերապահել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, որն էլ, ելնելով իր բյուջետային հնարավորություններից, պարբերաբար վերանայել և վերանայում է այն:

Հայրենական մեծ պատերազմի վետերանների սոցիալական խնդիրները մշտապես գտնվել են կառավարության ուշադրության ներքո. պարբերաբար իրականացվում են սոցիալական նոր ծրագրեր, որոնք միտված են ապահովելու մեր վետերանների արժանապատիվ և անհոգ ծերությունը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վետերանները ստանում են պարգևավճար, պատվովճար (որոնք պարբերաբար բարձրացվում են, վերջինը 50 հազար դրամից դարձել է 100 հազար դրամ 2019 թվականին), օգտվում են պետական պատվերի շրջանակում բուժօգնություն (այդ թվում՝ դեղորայք), անվճար վերականգնողական պարագաներ, առողջության վերականգնման և հանգստի կազմակերպման համար առողջարանային բուժման ուղեգրեր ստանալուց, ԱՊՀ երկրների տարածքում տարին մեկ անգամ (կտրոնով, երկկողմանի կարգով՝ 50 տոկոս զեղչով) արտոնյալ պայմաններով երթևեկելուց:

Տեղեկացնում ենք, որ «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով սահմանվել է, որ վետերանների ամենամյա պատվովճարի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 444-Ն որոշմամբ սահմանված պատվովճարի չափը Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի N 1089-Ն որոշմամբ սահմանվել է 25000 դրամ, 2015 թվականի մարտի 26-ի N 357-Ն որոշմամբ կատարվել է փոփոխություն, և պատվովճարի չափը սահմանվել է 50000 դրամ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 4-ի N 824-Ն որոշմամբ կրկին կատարվել է փոփոխություն, և պատվովճարի չափը սահմանվել է 100000 դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ որևէ դրույթ օրենքով սահմանելը չպետք է լինի ինքնանպատակ, այն պետք է լինի բավարար չափով հիմնավորված: Վետերանների ամենամյա պատվովճարի չափն օրենքով ամրագրելը հիմնավորված կլիներ այն պարագայում, եթե կառավարությունը որոշման ընդունումից ի վեր երբևէ չանդրադառնար պատվովճարների չափին և չկատարեր որևէ փոփոխություն: Սակայն կատարված փոփոխություններից պարզ է դառնում, որ հարցը գտնվում է Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում, և Հայաստանի Հանրապետության կառավարությունը բյուջեի հնարավարության շրջանակներում պարբերաբար բարձրացրել է պատվովճարի չափը՝ 20000-ից դարձնելով 100000 դրամ:

Միաժամամանակ կարծում ենք, որ օրենսդրի կողմից կառավարությանը վերապահված՝ վետերանների ամենամյա պատվովճարի չափը կառավարության որոշմամբ սահմանելը լուծման առավել ճկուն և ողջամիտ լուծում է:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ այս տարի լրանում է Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 75-ամյակը, այդ նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մայիսի 3-ի N 484-Ա որոշմամբ կառավարությունում ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որին անդամակցում են բոլոր շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչները, և որի նիստերի ժամանակ ներկայացվում և քննարկվում են հոբելյանական միջոցառումների շրջանակներում իրականացվելիք տարբեր, այդ թվում՝ նաև վետերանների սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումներ և նախաձեռնություններ, ինչպես նաև նմանօրինակ առաջարկներ:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ ենք համարում նշել, որ միջգերատեսչական հանձնաժողովում միջոցառումների քննարկման և իրականացման շրջանակներում հնարավոր է

առաջանա անհրաժեշտություն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով մշակել և շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 444-Ն որոշման մեջ (որով սահմանվում է ՀՄՊ վետերանների ամենամսյա պատվովճարի չափը) փոփոխություն կատարելու մասին կառավարության համապատասխան որոշման նախագիծը:

Միաժամանակ նշենք, որ Հայրենական մեծ պատերազմի վետերանների (01.03.2020 թ. դրությամբ 287 անձ) ամենամսյա պատվովճարի չափը 100 000 դրամով ավելացնելու դեպքում մեկ տարվա հաշվարկով պետական բյուջեից անհրաժեշտ կլինի 344 400.0 հազ դրամ լրացուցիչ գումար, որը 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված չէ:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող օրենքի գործող հոդվածը թողնել անփոփոխ:

Այդուհանդերձ, նախագծի հեղինակը կարող է պատվովճարի չափի վերաբերյալ իր առաջարկը ներկայացնել Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 75-ամյակի միջոցառումների շրջանակներում ստեղծված միջգերատեսչական հանձնաժողով՝ քննարկելու նպատակով: